Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1

Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan str.
0012 Yerevan, Armenia

T + 374 10 260 964
F + 374 10 260 961

www.grantthornton.am

«Հայաստանի Հանրապետության Հանրային հեռուստառադիոընկերության» խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվություն

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Grant Thornton

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Գոյություն ունեն հայտանիշներ, որ փոխհատուցելի ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) փոխհատուցման գումարը կարող է փոքր լինել վերջինիս 373,771 հազար դրամ և 345,078 հազար դրամ գումարով հաշվեկշռային արժեքներից՝ համապատասխանաբար 2015թ. դեկտեմբերի 31-ի և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Պատճառն այն է, որ չի ակնկալվում, որ Ընկերության գործունեության արդյունքում կգոյանա բավարար վճարվելիք ԱԱՀ՝ փոխհատուցելի ԱԱՀ-ի հետ հաշվանցելու համար, և չկան նշված գումարները փոխհատուցելու այլ մեխանիզմներ: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 36 «*Ակտիվների արժեզրկում*» համաձայն՝ նման հայտանիշների առկայության դեպքում ղեկավարությունը պետք է գնահատի փոխհատուցվող գումարները: Նման գնահատում չի իրականացվել: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջների հետ նշված անհամապատասխանության ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա չի որոշվել:

Ձևափոխված Կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ *«Կարծիքի ձևափոխման հիմքեր»* պարագրաֆում նշված հարցի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են «Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» ՓԲԸ-ի՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Grant Thornton

Այլ հանգամանքներ

«Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն» ՓԲԸ-ի 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը ձևափոխված կարծիք է արտահայտել այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2015թ. ապրիլի 27-ին: Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 24-ում, այդ ֆինանսական հաշվետվությունները վերաներկայացվել են Ընկերության ղեկավարության կողմից: Մեր կողմից աուդիտի են ենթարկվել նաև այդ ճշգրտումները:

2016թ. մարտի 25

Գագիկ Գյուլբուդաղյան

Տնօրեն

Էմիլ Վասիլյան

Առաջադրանքի ղեկավար

«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» 00040569

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծա-նոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (Վերաներկա-յացված)	2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (Վերաներկա-յացված)
Ակտիվներ				
Ոչ ընթացիկ ակտիվներ				
Հիմնական միջոցներ	4	3,467,420	3,558,666	3,125,555
Ոչ նյութական ակտիվներ		5,293	6,171	7,148
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	5	373,771	345,078	291,157
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		-	500	1,093
		3,846,484	3,910,415	3,424,953
Ընթացիկ ակտիվներ				
Պաշարներ		4,141	2,015	3,237
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր		2,099	4,568	6,189
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	-	3,992
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	6	37,541	1,519	21,690
		43,781	8,102	35,108
Ընդամենը ակտիվներ		3,890,265	3,918,517	3,460,061
Սեփական կապիտալ և պարտավորություններ				
Կապիտալ և պահուստներ	7			
Բաժնետիրական կապիտալ		293,283	293,283	293,283
Վերագնահատման պահուստ		1,099,346	1,163,908	888,327
Ընդհանուր պահուստ		60,102	60,102	59,057
Չբաշխված շահույթ		927,116	789,847	733,700
		2,379,847	2,307,140	1,974,367
Ոչ ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	8	37,777	33,772	22,170
Հետաձգված հարկային պարտավորություններ	9	261,344	286,801	211,881
Ակտիվներին վերաբերող շնորհ	10	1,121,474	1,153,482	1,182,078
		1,420,595	1,474,055	1,416,129
Ընթացիկ պարտավորություններ				
Վարկեր և փոխառություններ	8	20,000	70,000	40
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	62,808	66,454	69,525
Ընթացիկ հարկային պարտավորություններ		7,015	868	-
		89,823	137,322	69,565
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		3,890,265	3,918,517	3,460,061

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2016թ. մարտի 25-ին:

Արման Մարտաթելյան
Գործադիր տնօրեն

Սոֆյա Մալիյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (Վերաներկայացված)
Գովազդից հասույթ		20,093	18,050
Դրամաշնորհներից եկամուտ	12	860,561	745,268
Վարձակալությունից եկամուտ		15,895	16,716
Այլ եկամուտ		5,525	9,609
Հեռարձակման ծախսեր		(132,525)	(115,378)
Փոխհատուցումներ աշխատակիցներին		(478,430)	(451,375)
Ռադիոհաղորդումների պատրաստում		(49,328)	-
Մաշվածություն և ամորտիզացիա		(109,332)	(95,389)
Այլ ծախսեր	13	(64,544)	(147,078)
Գործառնական գործունեությունից շահույթ/(վնաս)		67,915	(19,577)
Ֆինանսական եկամուտ	14	602	19,836
Ֆինանսական ծախսեր	14	(8,711)	(5,750)
Այլ ֆինանսական արդյունքներ	15	(8)	576
Շահույթ/(վնաս) մինչև հարկերը		59,798	(4,915)
Շահութահարկի գծով փոխհատուցում	16	12,909	3,231
Տարվա շահույթ/(վնաս)		72,707	(1,684)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթին կամ վնասին			
Հիմնական միջոցների վերագնահատում		-	420,373
Չվերադասակարգվող հոդվածներին վերաբերող շահութահարկ		-	(84,009)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	336,364
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		72,707	334,680

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Վերագնա-հատման պահուստ	Ընդհանուր պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2014թ. հունվարի 1-ի դրությամբ (մինչև վերաներկայացումը)	293,283	903,931	59,057	710,236	1,966,507
Վերաներկայացում	-	(15,604)	-	23,464	7,860
2014թ. հունվարի 1-ի դրությամբ (վերաներկայացված)	293,283	888,327	59,057	733,700	1,974,367
Տարվա վնաս	-	-	-	(1,684)	(1,684)
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	336,364	-	-	336,364
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	336,364	-	(1,684)	334,680
Փոխանցում չբաշխված շահույթ	-	(60,783)	-	60,783	-
Փոխանցում ընդհանուր պահուստ	-	-	1,045	(1,045)	-
Շահաբաժիններ	-	-	-	(1,907)	(1,907)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	-	(1,907)	(1,907)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	293,283	1,163,908	60,102	789,847	2,307,140
Տարվա շահույթ	-	-	-	72,707	72,707
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	-	72,707	72,707
Փոխանցում չբաշխված շահույթ	-	(64,562)	-	64,562	-
2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	293,283	1,099,346	60,102	927,116	2,379,847

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (Վերաներկայացված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ/(վնաս)	72,707	(1,684)
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	109,332	95,389
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	-	(10)
Հողի արժեզրկումից կորուստ	-	66,629
Տոկոսային ծախս	8,711	5,750
Ֆինանսական եկամուտ	(602)	(19,836)
Շահութահարկի գծով փոխհատուցում	(12,909)	(3,231)
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստի շարժ	-	615
Դրամաշնորհներից եկամուտ	(860,561)	(745,268)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	8	(576)
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(683,314)	(602,222)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(26,224)	(53,111)
Պաշարների փոփոխություն	(2,126)	1,222
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(3,653)	(3,041)
Շնորհների ստացում	828,553	716,672
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	113,236	59,520
Վճարված տոկոսներ	(4,706)	(6,598)
Վճարված շահութահարկ	(6,401)	(998)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	102,129	51,924

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (Վերաներկայացված)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(16,708)	(170,471)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	-	196
Ստացված տոկոսային եկամուտ	602	1,713
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(16,106)	(168,562)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարկերից և փոխառություններից մուտքեր	-	147,828
Վարկերի և փոխառությունների մարում	(50,000)	(50,000)
Վճարված շահաբաժիններ	-	(1,907)
Ֆինանսավորման գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(50,000)	95,921
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	36,023	(20,717)
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1)	546
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	1,519	21,690
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	37,541	1,519

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 47-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: